Հայտարարություն

Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող և Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված մրցույթային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության տրամադրման բաց մրցույթ:

Լոտ - 1 Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-006-0560-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,10782 հա մակերեսով 4-րդ կարգի արոտավայր հողատեսքի հողամաս: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:
Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 16 920 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը 25 տարի:
Լոտ – 2 Սպիտակ համայնքի վարչական սահմաններում՝ Մ 7 (Մ3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման) մայրուղու հարևանությամբ գտնվող, 06-006-0438-0006 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:
Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 30 000 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը 25 տարի:
Լոտ – 3 Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, 06-006-0564-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,81225 հա մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:
Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 16 652 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը 25 տարի:
Լոտ – 4 Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, 06-028-0125-0030 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,59357 հա մակերեսով 2-րդ կարգի արոտավայր հողատեսքի հողամաս: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:
Հողամասի մրցույթով վարձակալությամբ տրամադրելու տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 4 764 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը 25 տարի:
Մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, պայմաններին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 206 սենյակ):

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և

ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 մինչև 2023թ. դեկտեմբերի 5-ը:
Մրցույթը կայանալու է 2023թ. դեկտեմբերի 8–ին ժամը 15.00-ին:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ և ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ